

անգլերեն ՅՊԻ Բարձրագույն դպրոց

3 հունիս 16 - 1999

ՄԱՍԻՍ

ԻՐԱՆԱՀԱՅ ԿԵԱՆՔ

ՆՈՐ ԱՄՍԱԳԻՐ ԹԵՀՐԱՆՈՒՄ

ԱՊԱԳԱ

کهنه

ماہنامه فرهنگی - اجتماعی

ارمنی زبان

شماره 1 (2) سالانه 1377

ՍՈՍԱԿՈՒԹԱՅԻՆ և ՀԱՍԱՐԿԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

Հունիս 1(2) Նոյեմբեր 1998 թ.

Անցնող տարուայ Նոյեմբեր ամսից Թեհրանում սկսել է լույս տեսնել «ԱՊԱԳԱ» ամսագիրը, խմբագրութեամբ երիտասարդ մտաւորական եւ թարգմանիչ՝ Էդուարդ Պաղտասարեանի: Մշակութային եւ հասարակական բնոյթով այս ամսագիրը տպագրուում է գունաւոր, ճաշակաւոր եւ հետաքրքիր բովանդակութեամբ եւ սպասելի է որ այն կը դառնայ մնայուն՝ օգտակար մի հրատարակութիւն, որի կարիքը միշտ զգայի է եղել Իրանահայ համայնքում:

«ԱՊԱԳԱ»ին աշխատակցում են մի շարք գրողներ եւ մտաւորականներ, այդ թւում Ազատ Մաթեան, Դոկտ. Ռ. Սարգարեան, Խաչիկ Խաչեր, Լեւոն Գ. Մինասեան, Հրաչ Ստեփանեան, Յովիկ Էդգարեան եւ ուրիշներ: Ամսագիրը հրատարակում է նաեւ պարսկերէն լեզուով յօդուածներ, որոնք առնչուում են հայոց պատմութեանը եւ մշակոյթին:

«ԱՊԱԳԱ»ի հասցէն հետեւեալն է.

«APAGA» P.O.Box 15175-117 TEHRAN-IRAN

Ի Դէպ ամսագիրը հրատարակուում է հայրենի ուղղագրութեամբ, որ աւելի մատչելի դառնայ ընթերցողին:

Յաջողութիւն եւ յարատեւութիւն մաղթելով Իրանահայ մամուլի այս մէկ նոր անդամին, նրա կորովի խմբագիր՝ Էդուարդ Պաղտասարեանին եւ ողջ անձնակազմին, ցանկանում ենք նորանոր յաջողութիւններ: